

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՍՏԵՓԱՆՈՍ ԴԱՇՏԵՑՈՒ ԱՌԱՋԻՆ «ԶՐՈՒՅՑ-ԲԱՆԱՎԵՃԸ»

Մեր մի հրապարակման տուաբանում արժևորելով Երուսաղեմի ս. Յակոբեանց վանքի թիվ 346 ձեռագրով մեզ հասած՝ 17—18-րդ դարերի նշանավոր բանաստեղծ, հրապարակախոս ու վաճառական Ստեփանոս Դաշտեցու անտիպ յոթ «զրույց-բանավեճերը», գրել էինք, որ «գր-րեթե բոլոր բանավեճերի հիմնական նյութը քրիստոնեական և մասնեղական կրոնների փոխ-հարաբերության, դրանց ծեսերի և սովորույթների, բարոյագիտական և գեղագիտական սկզբ-բունքների, մեկը մյուսի նկատմամբ ունեցած առավելությունների ու թերությունների հարցն է»¹։ Թեև այդ տեսակետից ամենից հատկանշականը համարել էինք առաջին «զրույց-բանավե-ճը», բայց, ելնելով որոշ նկատառումներից, դրանցից հրատարակության էինք պատրաստել միայն երկուսը՝ 5-րդը և 6-րդը, մյուսները թողնելով այլ առիթի։

Ներկա դեպքում հարմար ենք գտնում ընթերցողի ուշադրությանը ներկայացնել հենց ա-ռաջին «զրույց-բանավեճը», որը ծավալով ամենից մեծն է, իսկ հարցադրումներով ու դրանց տրված պատասխաններով՝ ամենից համարձակը։ Դատելով վերնագրից՝ խնդրո առարկա «զը-րույց-բանավեճը» յուրատեսակ ընդհանրացումն է նույն թեմայով տարրեր ժամանակներում ու տարրեր վայրերում Դաշտեցու ունեցած բազմաթիվ բանավեճերի, որոնցից վերջինը տեղի է ունեցել 1707 թ. Հնդկաստանի Բանդարի Սուրաթ առևտրաշահ քաղաքում, Իբրև բանավիճող կողմեր, հանդես են գալիս հեղինակը և պարսից մի խումբ «փիլիսոփայա անուանիս», որոնց անունները Դաշտեցին հարկ չի համարել հիշատակել՝ պատճառաբանելով, թե խուսափում է ավելորդաբանությունից։ Չբացառելով այդ հանգամանքը, անձամբ հակված եմ մտածելու, որ նա դա արել է առաջին հերթին կրոնական-քաղաքական զգուշավորությունից՝ ընդդիմախոսնե-րին գերծ պահել ավելորդ վտանգից։ Չէ՞ որ եթե Դաշտեցու հետ բանավիճող պարսիկ իմաս-տասերները հեռավոր Հնդկաստանի Բանդարի Սուրաթ քաղաքում կարող էին ցուցաբերել հաս-նական հանդուրժողություն և հանգիստ ձևով լսել մասնեղականությունն ու Մուսամմեդի հաս-ցեին քրիստոնեյա ընդդիմախոսի արած քննադատական դիտողությունները, ապա դա համար թանկ կվճարեին իրենց երկրում, ուր բացառվում էր մասնեղական կրոնի քննադատությունն ու բանական-փիլիսոփայական գնահատությունը, առավել ևս՝ եթե դա արվում էր քրիստոնե-յայի կողմից։ Էլ չենք խոսում այն մասին, որ իբրև բանավեճի կազմակերպիչներ հանդես են գալիս հենց պարսիկ իմաստասերները, որոնք, ինչպես իրենք են ասում, հետապնդում են ոչ այնքան կրոնական, որքան փիլիսոփայական նպատակ։

Հուսով ենք, որ սույն զրույց-բանավեճը կարժանանա ընթերցողների, ինչպես նաև հայ-իրանական մշակութային կապերի պատմությանը զբաղվող մասնագետների ուշադրությանը։

Բնագիրը հրատարակության ենք հանձնում առանց էական փոփոխությունների, միայն բա-ցել ենք կարճագրությունները, շղատառով նշել ակնհայտ սխալները, սեպածև փակագծերում ավելացրել պակասող տառերը, շտկել կետադրությունը, կազմել տեքստում գործածված պարս-կերեն բառերի ու արտահայտությունների ցանկ՝ տալով դրանց հայերեն թարգմանությունը։ Այս հարցում մեզ սիրով օգնել է պրոֆ. Գ. Մ. Նալբանդյանը, որի համար հայտնում ենք մեր խո-րին շնորհակալությունը։

Զ. Ղ. ՄԻՐՉՈՅԱՆ

ՃԱՎԱՐԿՈՒԹԻՒՆՔ Ի ՊԱՐՄԻՑ ՈՄԱՆՑ ԵՒ ՊԵՏԱՍԽԱՆԱՏՐՈՒԹԻՒՆՔ Ի ՄԷՆՔ Ի ՊԵՏԱՀԷՆՆ ՄԵՐ Ի ԲԱԶՈՒՄ ՏԵՂԻՄ, ՄԱՆԱԽԱՆԳ Ի ԹԻՎՍ ՓՐԿՉԻՆ ՀԱԶԱՐ ԵՕԹՆ ՀԱՐԻՐ ԵՒ ԵՕԹԻՆ, ՅՈՐԺԱՄ ԷՃՔ Ի ԲԱՆԿԱՐ ՍՈՒՐԱԹ ԱՆՈՒԱՆԵԱԿ ՔԱՂԱՔՈՒՄ Ի ՀՆԴԻԿՍ ԸՆԴ ՈՄԱՆՍ ՓԻՒՍՈՓԱՅՑ ԱՆՈՒԱՆԻՍ, ԶՐՈՐՑ ԱՆՈՒԱՆՔՆ ԵՐԿԱՐՈՒԹԻՒՆԸ] Է ՍՏՈՐԱԳՐԻԼ

Ցաւուր միում մինչդեռ հաւաքեալք գտաք ի տան ումեմն պարսկի բա-նաս[տ]եղծի և փիլիսոփայի, եղև բան ինչ ի կողմանէ նոցունց զնկատումն

¹ Տե՛ս Զ. Ղ. Միրզոյան, Ստեփանոս Դաշտեցու «զրույց-բանավեճերի» պատմամշակութային արժեքը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1995, թիվ 3, էջ 107։

ունելով առ մեզ թէ՛ Զարմանամ թէ՛ այսպիսիք արք մակացուք և առ բազում բանս հմուտք և կատարելաք զհարող ոչ հնազանդին օրինացն մեծի մարգարէին մերոյ: Բոլոր աշխարհ հանդերձ բնակչօք իւրովք նա՛ և զերկինս բոլոր հրեշտակօք և աստեղօք ի պատիւ մարգարէին մերոյ Եստեղծ Աստուած, մանաւանդ թէ՛ ակներև տեսանեն զՃշմարիտ խանգարումն օրինադրութեանց Աւետարանին Քրիստոսի: Վասն զի յայտնի է առ ամենայն ազգ երկրի, զի Մօսէսական օրենքն ներգործէր զգօրութիւն իւր մինչև ցհռչակումն Աւետարանին, իսկ Աւետարանական օրէնքն նմանապէս պարտ էր ներգործել մինչև ցհռչակումն Ֆրդանին հարկաւորապէս: Ուրեմն շգրտեմք թէ՛ է՞ [ր] աղագաւ յամառեալ ընդդիմանան այսպիսի, զոր զմեծ մասն աշխարհիս ընթանան զկնի, մանաւանդ թէ՛ Քրիստոսն ևս է վկայեալ գուշակելով զգալստենէ Մարգարէիս մեծի և այլն: Յայնժամն պատասխանեալ, ասացի մեղմաբար, թէ որպէս և դուք զարմանաք ի վերայ մեր, թէ զհարող ոչ իմանան սոքայ զխանգարումն Աւետարանին և զհռչակումն Ղուրանին, նմանապէս և մեք զարմանամք, թէ զիւրող ոչ նկատէք կամ իմանաք, թէ արքս այսոսիկ երևին, թէ ոչ են այնքան խելագարք (որպէս և դուք ձեզէն վկայեցիք ի յանցելումդ, թէ եմք մակացուք) և շեն սոքայ իբրև զանբան անասունս մինչ զի ոչ կարիցեն ճանաչել զշահաւէտութիւնս և զօգուտս իրեանց և կամ ենթադատել ի մէջ օգտակարացն և վնասակարացն, բարոյն և շարին, զգալոյն և իմանալոյն, մանաւանդ, թէ ճանաչել և իմանալ զայսքան պատիւս և զմեծութիւնս, զփառս և զվայելչութիւնս, զորս վայելեն մահմետականքն մեծաւ ախօթանօք: Զարմանամ, թէ զինչ վնաս բերէր մեզ փէյղամպարութիւն մարգարէին ձերոյ, եթէ Քրիստոսն հրամայեալ իցեր մեզ ամենից քրիստոնէիցս գալ ի հնազանդութիւն օրինադրին ձերոյ: Ոչ ապաքէն գահէրէց լինէաք և մեք տիրելով բազմաց, աւար առնելով և յափշտակելով զինչս և ըստացուածս հրէից և հեթանոսաց և այլադաւանից, հալալ և արժանի վարկանելով մեզ որպէս և կանոնադրեցաւ ի յօրէնս պարսիցդ: Ունելով զիշխանութիւնս և զմեծութիւնս, զփառս և զվայելչութիւնս, հետեապէս հեշտանայաք և մեք առնուլ զկանայս բազումս՝ գիրգս և փափկունս, նա՛ և ի յաղախնեաց զաշագեղս և զչքնաղատիպս ի յամբողջութեան և ի գեղեցկութեանն ընդգրկել և փարիլ և ի տգեղանալ և ի թարշամիլն թողուլ և զնորահա[սա]կան առնուլն: Հետեապէս յամենայն տեղիս և ի յամենայն ուրէք առնուլ զկանայս, ծնանել զորդիս, գոնեա՛ և վասն գիշերոյ միոյ առնուլ զճութահայս և միշտ հեշտանալ նոքօք: Նա՛ և զկնի այսքան մարմնական հեշտութեանցն սպասել և ի յերկինս խայտալ ընդ մայեքս և ընդ հուրիս հրեշտականկարս և շքնաղակերպս գուղաւորիլ գեր ի վերոյ քաղցրութեամբ և հեշտանալ անյագապէս և թարց նուազման ցանկութեանն մասին, հետեապէս և ուտելով և վայելելով զմրգունս և զպտղունս ծառոց զբարետեսիլս, քաղցրունս բարեհամս և զմայլեցուցիշս, նմանապէս և զկաթն, զմեղր և զգինի և լեարդս գեղեցիկ ձկանց զխորովեալս և համեղաճաշակս որպէս և մարգարէն ձեր մեծ խոստանայ հետեողացն իւրոց վայելել անսպառապէս: Զարմանամ, թէ զհարող անբան կենդանի ոք իցէ և կամ խելագար, որ ոչ հնազանդեցի մարգարէիդ այդմիկ առատաձեռնի, եթէ Քրիստոսն խօսեցեալ իցէ զդմանէ և կամ գուշակեալ զգալստենէ դորին և զանուանէ: Եւ կամ գոնեայ համետագոյն և կատարելագոյն երկիցիւր օրինադրութիւնք դորին և կամ շահաւետագոյնք առ կեցութիւն հանդերձելոցն համեմատելով առ Աւետարանն, ուրեմն և այլն:

Պատասխանեալ ասաց ոմն փիլիսոփայիցն պարսից, թէ Զիւրող ոչ իցէ օրինադրութիւն մերոյս մարգարէի շահաւէտագոյն և փարթամագոյն, քան զօրինադրութիւն Աւետարանին ձերոյ: Նախ՝ զի Ղուրանն ունի զբազում ահքամս, այսինքն[ն] օրինադրութիւնս, որպիսիք են կերպք և սահմանադրութիւնք դա-
90

տաստանաց քաղաքավարութեանց զտարորոշութիւնս ի մէջ կենդանեացն սրբոց և անս[ր]բոց և զկերպ զենմանցն զղուրբանից և թլպատութեանց, հետեւապէս պէսպիսի կերպիւ մկրտութեանց, լուացմանց մարմնոց, հատմանց հերաց և եղնգանց, սրբութիւն մարմնոց և մաքուր զգեստուց, նա՛ն պահճ երեսուն աւուրց ի տարուղն անսուաղ պահել հրամայելով մինչև ցերեկոյ, ուսուցանելով զկերպ աղօթիցն և զծնրադրութիւնս և այլ սոյնսպիսիք շահաւետազոյնք օրինադրութիւնք բազումք զորս երկարանամք ի թրեւն, մանաւանդ թէ զպատմութիւնս հոլովս ի Նոյէ և յԱբրահամու, յիսմայիլէ, ի Մօսէսէն և Յօվսեփայ, Դաւթէ, Սողօմօնէ, մանաւանդ թէ և ի Քրիստոսէ և ի Մարիամու լիակատար և սքանչելիս, ուրեմն և այլն:

Եւ իբրև ետ աւարտ բանիցն իւրոց պատասխանեալ ասացի. «Վասն Աստուծոյ խնդրեմ կամ ոչ առարկել ընդդէմ մեր ձեզ ազնուամեծաց երջանկացդ զվիճաբանութիւնս հաւատոյ և կամ մի՛ երբէք ցասնու կամ դաւել զմեզ, զոր ոչ երբէք մեղաք ձեզ: Քանզի դիտաւորութիւն երկոցունցս ոչ այլ ինչ է, եթէ ոչ իմանալ զնորագոյնս ինչ, վասն զի ոչ դուք կարէք թողուլ զբոլոր սրտէ ընդրեցեալ և ի նմա սեւեռեալ հաւատն ձեր, և ոչ ես կարեմ տանել և բոլորովիմք հետևիլ հաւատին ձերոյ, ի բաց մերկանալով ի սիրոյն Քրիստոսի փրկչին մերոյ»: Զորոց պատասխանեալ ասացին առհասարակք, թէ Մեք ևս լաւ գիտեմք զայդցանէ, զի ոչ մենք զքեզ առ մեզ դարձուցանել կարեմք կամաւ և ոչ դու զմեզ ի յօրինացն մերոց ամենևին, սակայն բանասկանին է գործ միշտ արծարծել զգիտութիւնն, վասն որոյ դիտաւորութիւն մեր ոչ է զոմանս դաւելոյ սակս, այլ միայն իմաստասիրելոյ յաղագս է դիտաւորութիւն մեր: Ուրեմն կարեմք բացասել յստորասութեանց միմեանց, նա՛ ևս ոչ է կանոն իմաստասիրաց կամ փրկիստփայից ցասնու իրերաց և կամ պահել զոխս ի սակս վիճաբանութեանցն, որ հայիցի միշտ ի յիմաստասիրելն, ուրեմն և այլն:

Յայնժամ պատասխանեալ ասացի. «Ուրեմն ներեցէք մեզ, քանզի զբովանդակ առբերեալ յահբում, այսինքն օրինադրութիւնքն, զորս աստանօր անուանեցեր, զորս պարունակէ պատգամն Մարգարէին ձերոյ, նա՛ և զորս և ճառելի մնաց ի ձէնչ, տեսանի զբովանդակսն-ստորագրեալ նախքան զգալուսս մարգարէին ձերոյ մեծի ի գիրս հնոց կտակար[ան]ացն հաստիսպէս և անթերի, այսինքն ի Թովրաթ անուանեալ գրգուղն, մանաւանդ թէ և ի գիրս Կտակարանացն նորոյս, այսինքն, ի յինչիլ անուանեալ գրգուղն Յիսուսի Քրիստոսի, զոր եթէ իւրաքանչիւրքն եկեալք պահանջեսցեն զգրեալսն իւրեանց, կարծեօք թէ սակաւ ինչ մնայ ի յայնքսն ամենահարուստ պատմագրէն ձերմէ: Վասն զի զբազում ահքամս և արարողութիւնս ի ճառեցելոցն քոց նախքան զգալուստ մարգարէին ձերոյ ունէր պարունակեալ ներ յինքեան Թովրաթն, որպէս և ասացաք, վասն զի զթլպատութիւնն էառ զսկիզբն իւր ի յԱբրահամու, Դուրանն ի յԱբիլէ օրէնք դատաստանաց, զենմունք անասնոց սրբոց, խորշմունք ի յանսուրբ կենդանեաց, յուծմունք պէսպիսիք և պահճ մինչև ցերեկոյ և այլք սոցին նմանք օրինադրութիւնք էառ սկիզբն իւր ի Աբրահամու Մօսէսէ, Իսկ պատմականօրէն զրուցատրութիւնք թէ սակս նախահարցն և ներմարմնութեանն Քրիստոսի ի Թովրաթ անուանեալ Կտակարանէն, ևս ի Աւետարանէն Տեառն մերոյ Քրիստոսի, զոր եթէ գոյր և ի միջի ձերում զԹովրաթն՝ դիրսպէս կարէիք վերահասու լինիլ սակս իրողութեանս, ուրեմն և այլն:

Սակայն համարձակիմ այսու եւս առաջի ձերին մեծութեանն հարցանելով և այս ինչ թէ, ո՞վ գերահռչակ պատուելիք իմ և փրկիստփակայանաւ գիտութեամբ ճոխացեալք, ի մէջ այսքանասեռ կենդանեացն զո՞րն ճանաչէք զու պատուականագոյն, քան զմիւսն: Թրի թէ ա՛յն, որ կերպիւ իմն առաւելապէս ունի զմակացութիւն, քան զմիւսն, որպէս զի տեսանի, թէ մեղուն առաւելա-

պէս ունի զգիտութիւն, քան զբզէզն, մրջիւնն քան զհողամաղն, օձն քան զգորտըն, մէյնոյն* քան զակոսան, փիղն քան (գ)արջն, ձին քան զէշն և մարդն քան զամենայն կենդանիս յոճասարակս: Մանաւանդ տեսանի ևս թէ աճողականին են կատարելագոյնք քան զվիմաքարս, և զգայունքն քան զսոճողականսրն, բանակաւնն քան զգայականն: Եւ իմանալիքն, որք մուշառուադոսն ասէք ըստ ձերում լեզուաց, պատուականագոյնք քան զբանականն, որ է մարդն: Վասն զի որքան և յաւելանի ոք ի բանականութեան, այսինքն հպիցուցանէ զինքն ի յիրս իմաստալիս, որ է սուհանին, յաւելանի և ի պատուականութիւն հարկաւորապէս: Սորին յաղագս ամենեքեանն իբր ի միոջէ բերանույ պատասխանեալ ասացին, թէ Ոչ գոյ երկբայութիւն ի մէջ առբերեալ բանիցդ:

Վերստին զհարցումն արարաք ասելով թէ, զի թէպէտ մարդն ևս դասի ընդ սեռի, վասն զի է կենդանի, որպէսիք են ձին, արջառ և այլն, ունելով և զերկուս աչս զգայականս և ջոմանի, որպէս և ունին միւս կենդանիքն: Սակայն տեսանի, թէ մարդն բաց ի յզգալեաց աչացն ունի և այլ իմն աչս պատուականագոյնս՝ իմանալիս և լաթիֆս, զոր իբրև կամիցի, կարօղ է նովիմք իմանալեօք աչօքն նկատել զիմանալիս և զերկնայինսն հետեւել, համեստին ընտրել ի մէջ բարւոյն և շարին և նոքօք խոկալ զիմանալեացն, որք են պատուականագոյնք գոյացութիւնք, որպէս և ուսուցանէ մեզ Աւետարանն Քրիստոսի, որ միշտ հրաւիրէ զազինս խորհիլ միշտ զվերնայինս, ի բաց քարշելով ի յզգալեացս, զոր տեսանի, թէ այլք կենդանիքն ոչ ունին զայս միւս աչս: Յասացելոց հետեւի ուրեմն, թէ իմանալիքն պատուականագոյնք և լաթիֆիք են, [քան] զգալիքս, անմարմինքն քան զմարմնականքս, վերնայինքն քան զըստորնայինքս և այլն: Նմանապէս ասացին առ հասարակքն, թէ Այնքան ունի զհաւաստութիւն և ճշմարտութիւն առաջարկութիւնքդ այդոքիկ մինչ զի եթէ ոք պպուսումն տացէ ի յասացելոցդ ոչ է հաւասարելի ընդ բանական կենդանեաց զայնպիսին: Ասացաք ուրեմն, թէ ուսուցանիքն, այսինքն՝ իմանալիք են պատուականագոյնք և լաթիֆք, քան զջոմանիքն, այսինքն զգալիսն, հետեւվ[ա]յէս և ուսուցանուն հետեւողքն են լաթիֆք և բանականք, քան զհետեւողսն ջոմանոցն և զզգալեոցսն հարկաւորապէս: Յայնժամ հանձարեողքն ի խորագիտութիւնս իմացան զնկատմանէ ձեռնարկութեանցն մերոց, սկսան առժամայն թողուլ զպատասխանատրութեանէ, առարկեալ ձեռնարկութեանցն մերոց, աճապարելով թերևս այլ իմն զբան ի մէջ արկանել և ասել, թէ Աւետարանն ձեր եթէ ոչ էիք փոփոխեալ, զոր վասն օրինադրին մերոյ ունէր զգուշակումն յանուանէ, յայնժամ տայաք յամօթի առնել զձեզ, այլ բարձիք զբոլորն զորս մարգարէին մերոյ սակս ունէր զգուշակումն, զինչ օգուտ է ուրեմն ընդ վայր դեգերիլ առ ի դատարկաձեռն վաստակս և այլն: Սմին յաղագս պատասխանեալ ասացաք, թէ Փիլիսոփայից և իմաստասիրաց ոչ է կանոն նախքան զտալըն ենթադատութեան և եզրակացութեան առաջարկութեանց ձեռնարկողացն աճապարիլ առ այլ իմն ձեռնարկութիւն: Թէպէտ և բարուտք է և զհրամանալն ձեր առաջարկութիւն, որ և պատրաստ եմ Աստուծով, զոր ինչ և կարեմք անկատարութեամբս մերով ծառայել պատուականութեան ձերում դուզնաքեալ բանիւ առ յապայն: Այլ արդ աղաչեմ զձեզ, զի նախ տայցէք եզերիլ առաջնոյ ձեռնարկութեանն և ապա մատիլ առ միւսն: Ուրեմն ըստ հաւաքաբանութեանցն մերոց զորոց և առաջի բանական աչաց ձերոց եղաք ոչ գոյ երկբայութիւն, զի պատուականագոյնք են իմանալիքն քան [զ]զգալիսն և հոգևորքն քան զմարմնաւորսն և հետեւողք հոգևորաց և իմանալեացն քան զմարմնաւորսն և զզգալիսն: Հետեւապէս և պատուականագոյն է օրինադիր հոգևորաց և իմանալեաց և վերնայնոցն սահմանադրութեանց, քան զօրինադրոյն հետեւան

* Գրչական վրիպակ է, պետք է լինի մէլմուն:

զգայինաց ապականացուաց և աղցաւորացս և այսքան բաւակա[ն] է մեծի խոհեմութեան ձերոյ: Եւ յասացելոցս հետևի թէ այնոքիք ահաբար, այսինքն օրինադրութիւնք, զորս ի վեր անդր առբերեալ եղև ի ձէնչ, նորա բովանդակքն հային միայն ի յզգալի մարմին մարդոյն՝ թէ թլպատութիւնն, թէ ղուրբանն, թէ լուացմունք մարմնոյն և հատանումն հերաց և ըղնգացն և թէ խտրութիւնք կերակրոցն, թէ զկերպ մերձաւորութեանցն և մինչև ցքանի կանայս նքահիւք առնուլ հրամանացն և կամ հրամանք ընդ աղախնեաց և զուզաւորութեանց նոցին մինչև ցորճանութիւնն և այլ սոյնպիսիք արարողութիւնք, զորս յանուանէ արծարծելն մի ըստ միոչէ լինի ձանձրութիւն, սոքայ ամենեքեանն են իրք մարմնաւորք և թերևս զգայականացն բաղձալիք և ախորժելիք և ոչ բանականացն ամենկին: Վասն զի տեսանի թէ բանական զօրութիւնն միայն մարդոյն ետ աստուած ի մէջ անհամար տեսակաց կենդանեացն, զի կարիցէ մարդ ի ձեռն բանականութեանն ընդ հնազանդութեամբ իւրով դնել զզգայականութիւնն և զսպեալ սանձէսցէ զնա՛, զի մի ձկտեսցի նայ ախորժակս և ի հեշտութիւնս բնութեանն զգայականին: Վասն զի ամենայն, որ ոչ հնազանդեցուցանէ [զ]զգայական զօրութիւն իւր ընդ հնազանդութեամբ բանականին, ոչ կարեմք իսկապէս անուանել զնա՛ մարդ [բանական] և կամ տալ նմա՛ զսահման մարդոյն թէ է մարդ բանական: Այլ յաւէտ ասելի է յայնպիսոյն եղն մարդատեսակ և կամ արչ մարդաձև, վասն զի է մարդն յայնժամն սոսկ մարմին, ունելով միայն զկենդանական զօրութիւնն, ունելով թերևս մէն մի նոյն զաշս մարմնականս, որպէս և ունին աղուեսունք, մկունք, գայլք և այլ ժժմունք: Վասն զի ոչ ունին յայնժամն զաշս բանականս զիմանալիս սր[ը]նթացս երկընաշուս և աստուածավայելուշս, որպիսի է հատուկ բանականին: Այլ են յայնժամն իբրև զանբան կենդանիսն, վասն զի զոր ինչ և տեսանեն զգալիօք աշօքըն, նովիմբ և խայտան, նովիմբ և համարին լինիլ երանելիք, իսկ և թէ այսպէս է որպէս և ասացաքն, ապա ուրեմն՝ աւետարանական վարդապետութիւնն Քրիստոսի երևի կատարելագոյն և պատուականագոյն գոլ քան զամենայն օրինադրութիւնս և զպատգամաւորութիւնս, թէ Մօսէսի և թէ այլոց և արգարէիցն թարց երկբայութեանց, վասն զի նոքայ ամենեքեանն ու[ս]ուցանեն զմարմնաւորն՝ զզգալին և զապականացա[ոյն], մանաւանդ թէ զկրթումն ի հեշտութիւնն և ի յախորժելիս զգայականութեանն, իսկ սա՛ ուսուցանէ զվերնային զհոգևորն և զիմանալին, որք են պատուականագոյնք յարամնայք մշտնջենականք և [ան]ապականելիք, վասն զի հրամայէ սա՛ ամենայն մարդոյ ուրանալ զստորնայնոցն, մանաւանդ ի շորեցունց մանաւանդականաց տոփանաց մարդոյն, որք են հետևեալքս յայտքիկ:

1 Վասն զի մանաւանդագոյն սիրելի մարդոյն նախկին է, այսինքն՝ անհատութիւնն իւր, այսինքն՝ զմարմինն իւր, վասն զի ոչ ոք կենդանի սիրէ իմն իր առաւել, քան զկենդանական զօրութիւնն իւր, քան զինքն և զլինելութիւն իւր հարկաւորապէս: Վասն զի զոր ինչ և տեսանի սիրելի[ի], երևի թէ զբովանդակ սիրեցեալն ի օգտութիւն ինքեան և վասն հեշտութեան անձինն իւրոյ սիրէ և ոչ այլ իմն պատճառի յաղագս, ուրեմն և այլն:

2 Երկրորդաբար սիրելիք մարդոյն են կերակուրք և ըմպելիք, զզեստք և արկանելիք: Վասն զի ամենայն մարդ ջանայ ունիլ զկերակուրս և զըմպելիս բազմադիմիս և հոգալ զորովայնն առ ի պահպանութիւն անհատութեանն իւրոյ, ուստի և տեսանին ամենայն մարդիք աշխատիլ, նեղիլ, շարշարիլ, գողանալ, յափշտակել, սպանանել և բազմիցս սպանանիլ և մահանալ և հոլովիցս ի դուռն սատակման ընթանալ սակս լցուցանելոյ զորովայնս մեծաւ տենչանօք, ևս և ցանկան ունիլ [զ]զզեստս շքեղս՝ ծիրանիս և ընդելուզեալս ոսկէթելս և պսպղունս, սքանչատեսիլս և այլն:

3 Երրորդ ըղձալին է մարմնոյն ունիլ զիզայինս փափկամարմինս, և ամե-

նայն մարդ զզուգակիցս զոմանս, այսինքն՝ զկանայս և զուգաւորութիւնս առ միմեանս, վասն զի ամենայն բարութիւնք երկրայնոցս համեմատելով առ այս հեշտութիւն երևին աղօտագոյնք, գոնեայ իբրև զճրագ իմն հանդէպ արեգագան, վասն զի ամենայն կենդանիք իբրև սկսանիցին առ այսպիսի հեշտութիւնն նախ տան մոռանալ զինքեանս բոլորովիմբ, հետևապէս և արտաքոյ ինքեանն, թէ զկերակուրս և զըմպելիս, զբանտս, զկապանս և ապա զինչս և զստացուցածս և ասեմ, թէ և զոր կարծին ունիլ՝ տան մոռանալ ամենևին մեծաւ մոլեգնութեամբ ջանան շարագուգիլ ընդ իզին, նմանապէս և այրն ընդ կնօջ և կին ընդ առն անյագ տենչանօք և այլն:

4 Զորրորդ սիրելիք և ցանկալիք մարդոյն՝ ոսկին, արծաթն և մամոնայք աշխարհիս, վասն զի տեսանին, թէ բազումք ի մարդկանէ կորեան սակս ցանկութեանց արծաթից և գանձուց, ընչից և ստացուածոց ի ծովս և ի ցամաքս լինելով հանապազ մեծի վշտաց և տրտմութեանց՝ բազմիցս ի յերկուղէ ըմբռնեալք, ի տարակուսանաց տատանեալք, ի յահէ գողաց սարսեցեալք և ի յաւազակաց խոցեցեալք, ի տանց և ի ընտանեաց մերկացեալք, բազումք դրնելով զանձինս, զկեանս և զհասակս իւրեանց ի վերայ ցանկութեան մամոնային: Երբեմն ի ծովս և ի յալէկոծութեանցն բռնութենէ յատակս ծովու և կերակուր ձկանց ստորադրեալք, երբեմն ի տօթոյ և ի խորշակէ պակասեալք և երբեմն ի սառնամանեացն շնչմանց քարացեալք: Եւ այսոքիկ և առաւել քան զսոսա՝ ցաւք, ոչ այլ ինչ աղագաւ է տեսանել, քան թէ ժողովելն զգանձս և կամ զցանկութենէ արծաթոյն, սակս այլոց մարմնականաց ցանկութեանց, զորոց և Աւետարանն Քրիստոսի ուսուցանէ՝ ի բաց մերկանալ ամենևիմբ զայսցանէ և այլոց հեշտութեանց ստորնայնոցս և փախչիլ ի յասացելոց ցանկութեանց և տոփանացն:

1 Վասն առաջնոյն հրամայէ ի Մատթէոսի տասներորդ գլուխն և ի 28 համարն, թէ Մի՛ երկնչիք յայնցանէ, որք սպանանեն և զհոգի ոչ կարեն սպանանել, այլ երկերուք դուք առաւել յայնմանէ, որ կարօղ է զհոգի և զմարմին կորուսանել ի գեհենի: Եւ ի սոյն Մատթէոսի հինգերորդ գլխոջն և ի 10 համարն ասէ. «Երանի է ձեզ, եթէ հալածեալք իցէք վասն արդարութեան, զի ձեր է արքայութիւն երկնից»: Եւ յետոյ յուսադարկալնալ զիմաւ ասէ, թէ ցնծացէք և արախ լերուք (զի եթէ աստ սպանանիցեն կամ հալածեսցեն զձեզ մի հոգայցէք), զի վարձք ձեր բազումք են յերկինս և այլն: Իսկ տեսանի զներհակ սորին ուսուցանել մարգարէին ձերոյ զպատգամ. ի բազում տեղիս հրամայելով թերևս սպանանել զայնս, որք ոչ ստորասիցեն զինքենէ թէ է մարգարէ, ի սուր սուսերի մաշեցուցանել զամենեսեան և ի յաւարի առնուլ զինչս և զստացուցածս նոցա, վասն զի նախ ինքն արար և ապա՝ պատուիրեաց հետևողացն իւրոց առնել, այսինքն հետազօտելով ցանկականին զգայականութեանն և հեշտութեանց ախորժակաց կենդանական զօրութեանն: Այն Քրիստոսին և այս Մարգարէին ձերոյ:

2 Վասն երկրորդին հրամայէ Քրիստոսն ի Ղուկասու երկոտասներորդ գլուխն և ի 29 համարն, թէ եւ դուք մի խնդրէք թէ զինչ ուտիցէք կամ զինչ ըմպիցէք և մի զբաղնուք: Եւ դարձեալ ասէ. «Հայեցարո[ւ]ք ընդ ազուս, զի ոչ սերմանէն և ոչ հնձեն, որոց ոչ գոն ըշտեմարանք և ոչ ամբարանոցք և աստուած կերակրէ զնոսա»: Եւ այլ ուրեք ասէ. «Մի՛ հոգայք վասն վաղուեան, թէ զինչ ուտիցէք կամ զինչ զգենուցուք»: Նա՛ ևս հրամայէ ի Մատթէոսի վեցերորդ գլխոջն և ի 19 համարն. «Մի՛ գանձէք ձեզ գանձս երկրի և այլն, և այլ ուրէք ասէ, զի առաւել է հոգի քան զկերակուր և այլն: Նա՛ և վասն զգեստուց հրամայէ՝ ի Ղուկասու տասն գլուխն և ի 27 համարն գրէ. «Հայեցարուք ընդ շուշան որպէս աճէ ոչ ջանաւ և ոչ նիւթէ ասեմ ձեզ և ոչ Սողոմօն յամենայնի փառս իւր զգեցաւ իբրև զմի ի նոցանէ, իսկ զխոտն, որ այսօր ի բացի

է և վաղիւն ի հնոց արկանելի, Աստուած այնպէս զգեցուցանէ, որչափ առաւել զձեզ թերահաւատք: Իսկ տեսանի սոցիւն ներհակն ուսուցանել պատգամին ձերոյ զսահմանադրութիւն: Վասն զի ասէք դուք առհասարակ պարսիկք թերևս ի օրինադրութեանց պատգամացն ձերոց, թէ զոր ինչ և պահանջէ բնութիւնն, եթէ ոք զրկիցէ զինքն ի նոցունց, մահու շափ մեղք են նմա՛, այսինքն, թէ՛ յուտելեաց սակս, թէ՛ ըմպելեաց, թէ՛ ի զուգաւորութեանց և ի յայլոց հեշտութեանց մինչև ցայն տեղին, զոր հրամայէ, թէ եթէ կին ուրուք ցանկանայցէ լինիլ ընդ մարգարէին, եթէ այրն նորա ոչ արձակիցէ զկինն, լինի մահու շափ մեղապարտ: Վասն զի կինն այն ոչ ժամանէ իւրոյ ցանկութեանն, որ է մեծ և ահագին մեղք: Իսկ որովհետև այրն նորա լինի խափանիչ ցանկութեան կրնոջն, հետևի ուրեմն թէ մահու շափ մեղանշեաց այրն: Ահա այս մարգարէին ձերոյ և այն՝ Քրիստոսինն:

3 Եւ վասն երրորդին հրամայէ ի Ղուկասու շորեքտասաներորդ զլուխն և ի 26 համարն՝ ասելով. եթէ ոք գայ առ իս և ոչ ատեայ զկին կամ զորդի նա՛ և զանձն իւր, ոչ կարէ իմ աշակերտ լինիլ և այլ ուրէք ասէ. «Եւ որ հայիցի ի կին առ ի ցանկանալոյ նմա՛, շնացաւ ի սրտի իւրում» և այլն: Իսկ զներհակ սորին տեսանի օրինադրութիւնք մարգարէին ձերոյ, որպէս և պատմի ի գիրս պատգամացն իւրոց, զոր նախ ինքն էառ զկանայս թերևս տասն, զորոց գրեալ կայ ի Ղուրանին, զորոց և զանուանագրութեանցն երկարանամք ի ճառելն: Նմանապէս և հրամայելով հետևողացն իւրոց առնուլ զկանայս որքան և կարիցեն ըստ պարսիցդ, իսկ ըստ Ղուրանին հրամանաց նքահուք, այսինքն, պսակօք՝ զշորս, և ի յաղախնեաց՝ որքան և կարողանայցեն, ոչ բաւականանալով միոյ կնոջ: Նա՛ ևս ի յերիտասարդութեան և ի գեղեցկութեան առնուլ և ի ծերութեան և ի թառամիլն արտաքսել, որք սոքա ամենեքեանն են օրէնք զգայականք և ի սոսկ մարմին եղելոց փարելիք և ախորժելիք: Ահա՛ և այս ևս մարգարէինն ձերոյ և այն՝ Քրիստոսինն մերոյ:

4 Եւ վասն չորրորդին հրամայէ ի Մատթէոսի տասներորդ զլուխն և ի 7 համարն. յորժամ կամեցաւ առաքել զաշակերտսն իւր ի քարոզութիւնն՝ պատուիրեաց այսպէս. «Եւ իբրև երթայցէք ի քարոզութիւնն զհիւանդ նոցա բժշկիցէք, զբորտսն սրբեցէք, զվես հանէք, ձրի առիք և ձրի տուք, մի՛ ըստանայք ոնկի և մի՛ արծաթ և մի՛ պղինձ, ի գօտիս ձեր մի պարկ ի ճանապարհի և մի երկու հանդերձս, մի զօշիկս և մի ցուպս» և այլն: Նա՛ և Ղուկասու վեցերորդ զլուխն և ի 29 համարն հրամայէ, թէ եւ որ հարկանէ զծնօտ քոյ, մատոյ նմա և զմիւսն և որ հանէ ի քէն զբաճկոն քոյ, մի արգելուլ ի նմանէ և զշապի՛նս, ամենայն որ խնդրէ ոք ի քէն տուր և այլն: Նմանապէս և զներհակ սոցին քարոզել տեսանի մարգարէն ձեր: Վասն զի նախ ինքն սկսաւ ի ձեռն սուտերաց հուշակել զմարգարէութիւնն իւր և սրով ետ դարձուցանել զազիւս ի կրօն և ի դաւանութիւն մարգարէութեանն իւրոյ համանգամայն և հրամայեաց հետևողացն իւրոց նմանապէս առնել ազանց մինչ զի, եթէ ոք կամիցի հետաքրքիր լինիլ և կամ սակս տարակուսութեանց և կարծեաց իմիք ընդ[դ]իմանալ առ ժամայն սպանանել զայնպիսիսն և զտունս, զինչս և զստացուցածս նոցին յաւարի առնուլ, զկանայս և զընտանիս նոցին վարել ի գերութիւն և զայլսն ըստ կարգի: Արդ աղաչեմ զձեզ վասն աստուծոյ զո՞րն ի սոցանէ գոլ ասէք լինիլ համէստ և գեղեցիկ, պատուելի և հոգևոր երկնային և իմանալի, հաճոյ Աստուծոյ և յարամնաց և ո՞րն ի սոցանէ է մշտնջենաւոր և հաւանելի բանականացն, ո՞րն է շարստայ լաթիֆ և կամ ոսհանին: Եւ կամ ո՞րն համեմատի երկնաւորացն և ո՞րն ստորնայնոց, և թերևս անբան կենդանեացն կենցաղավարութեանց համընթացք: Տուք զիրան, զի յայտ գայցէ ճշմարտութիւնն, թէ ո՞րն է իմանալին և որն զգալին, զ[ի] բաւականասցի կողմանցս երկոցունց:

Եւ իբրև լուսման եղև երկոցուն կողմանց զբաւական ժամս, յայնժամ պատասխանեալ ասաց ոմն ի բազմելոցն, թէ Դու զոր ինչ և ի ձերոյ կողմանէն ունիս զբան ինչ մեծաւ ճեպով կամիս ձեռնարկել զնոյնն և ամենևին ոչ կամիս պատասխանել ձեռնարկութեանցն մերոց և ոչ մի, վասն զի մնա տակափն առաջին խնդիրն մեր, զոր ի ձեռն ապացուցութեանն բացայայտեցաք, թէ ի գալ օրինադրին մերոյ, այսինքն մարգարէին մեծի պարտ իսկ էր դատարկանալ օրինադրութեանց Աւետարանին, որպէս և Աւետարանն ետ բառնալ զզօրութիւն մօտեսական օրինացն: Արդ զինչ ասէք դուք առ այսպիսի ակներև ճշմարտութեանս: Եթէ դու իրաւամբ բանի պատասխանեցես առարկութեանս այսմիկ, մեք ևս պատասխանեցուք և քոյոց ձեռնարկութեանցն կարի յօժարութեամբ:

Յայնժամն պատասխանեալ ասացաք, թէ Թերևս դուք ասէք, թէ ի գոլ աւետարանական օրինացն բարձան օրէնքն Մօսէսի իսպառ և ոչ մեք, վասն զի ի գալ աւետարանական օրինացն Թերևս բարձան օրինադրութիւնք ոմանք, որք հայէին միայն ի յիրս մարմնաւորս իբր խորշմունք կերակրոց, թլպատութիւնք մարմնոց, լուացմունք պէսպիսիք և այլք օրինադրութիւնք, որք առ ըզգայական մարմինն ունելով զնկատումն և եթ զորոց երկարանամք ի թվելն: Եւ ոչ թէ ի բաց բարձումն եղև տասն բանեայ պատգամաց Տեառն և կամ այլոց օրինադրութեանց, որք հայէին առ հոգևոր կեցութիւն և մշտնջենապէս օգտութիւն մարդոյն, որպէս և դուքդ կարծեք: Յուցանի այս և ի ձեռն պատճառաց: Վասն զի թէպէտ փոխանորդէ ոմն թագաւոր ի տեղի միւսոյն, սակայն ոչ է հարկաւոր, զի զոր ինչ օգտաբեր և շահավէտ սահմանադրութիւնք, որք կարգեալք իցեն ի նախկնոյ թագաւորէն սակս մշտնջենապէս պահպանութեան բնակչաց երկրին, զի նորանիստ թագաւորն ի բաց մերժեցէ իսպառ զբարուք սահմանադրութիւնս առաջնոյն, կարէ Թերևս փոփոխել զոմանս արարողութիւնս, այսինքն՝ տալ տպել զանունն իւր ի վերայ դրամոցն և դահեկանացն, մեծացուցանել կամ փոքրացուցանել զշափս և զկշիռս, զզգեստս և այլ սոյնպիսի իրս, որք ոչ ընդդիմանան կամ վնասեն շահաւէտութեամբ եղելոց սահմանադրութեանց նախկնոյ թագաւորին, Թերևս տալ և ծանուցանելոյ զինքն աղագաւ բովանդակ բնակչացն առ ի ճանաչել, թէ առաջին թագաւորն մեռաւ և երկրորդն եկաց: Նմանապէս և ծայրագոյն Թագաւորն ամենայն արարածոց, զոր ինչ և սահմանադրեաց ի կեցութիւնն մշտնջենաւոր յաւիտենին՝ թէ ի ձեռն Մօսէսի, թէ ի ձեռն Քրիստոսի և թէ ի ձեռն այլոց մարգարէիցն ոչ ոք կարէ փոփոխել և կամ ասել, թէ այն հին հրաման է աստուծոյ և է խոտելի կամ այս նորն է և է ընդունելի: Իսկ եթէ այսպէս էր, ուրեմն դուք ընդէ՞ր պատուեք զօրինադրութիւնս Հնոյ կտակարանացն: Վասն զի ունիք զդուրբանն ընդ Աբելի և Աբրահամու զթլպատութիւնն և զնոյն Աբրահամու և զայլս համայնս արարողութիւնս Մօսէսի, թէպէտ սոքայ ամենեքեանն հային միայն ի զգալի մարմինն մարդոյն, որք են առօրեայք և ապականելիք, ուրեմն և այլն:

Սակայն կամիմ և զայս հարցանել ի ձերմէ յազնուականութենէն, թէ ուրեմն ըստ դիտաւորութեանն ձերոյ մինչև ցոր վայր ներգործէր Աւետարանն Քրիստոսի զներգործութիւնն իւր և զզօրութիւնն: Պատասխանեալ սա հասարակք ասացին, թէ Մինչև ցհռչակումն և ի գալ պատգամին մարգարէին մերոյ յերկնից և ի նուիրումն մարգարէութեանն մարգարէին մերոյ մեծի: Յայնժամն վերստին հարցումն արարաք, թէ քանի ամաց էր մարգարէն ձեր և կամ յորում հասակի նորին առաքեցաւ նմա՞ զպատգամն և զմարգարէութիւն: Պատասխանեաց ոմն, թէ էր սմաց իբրև քառասնից, աւելի Թերևս և ոչ պակաս: Պատասխանեալ հարցաք վերստին, թէ Մինչև ցայն հասակն որո՞վ օրինօք վարիւր մարգարէն ձեր, թրի, թէ էր հնազանդ օրինացն Քրիստոսի: Պատասխանեալ ասաց ոմն ի նոցանէ, թէ Ոչ էր հարկաւոր լինիլ նորա օրինօքն Քրիս-

տոսի, վասն զի կարելի էր լինիլ հաւատովն Արրահամու և ի ծննդոցն Իս-
մայիլի: Պատասխանեալ ասացաք, թէ Որովհետև դուք ասէք, թէ ի ժամանա-
կըս օրինադրութեանցն Մօսէսի, եթէ ոք ոչ հնազանդիցիր նորին օրինացն,
լինէր ապստամբ ճշմարիտ օրինացն: Նմանապէս և ի հռչակիլ Աւետարանին
պարտ էր ամենայն ազգս և ազանց հնազանդիլ օրինաց աւետարանական վար-
դապետութեանցն և եթէ ոմն ապստամբիցիր, ոչ էր հնազանդ հրամանին
Աստուծոյ: Իսկ եթէ այսպէս է որպէս և ասէքդ, ուրեմն պարտիք տալ և մար-
գարէին ձերոյ զարգանալ օրինօքն Քրիստոսի մինչև ցհասակ մարգարեու-
թեանն նորին հարկաւորապէս, վասն զի տալ օրինօքն Արրահամու զարգա-
ցուցանելն մեծամեծս բերէ զվնաս, զոր և յանդգնութիւն է մեզ կարծել, մա-
նաւանդ թէ ասել յա[յ]նպիսի գերահռչակ մեծէ յառնէն, ուրեմն և այլն: Յայն-
ժամն մեծ ոմն փիլիսոփայիցն պատասխանեալ ասաց, թէ ի միջի մերում են
երկու կարծիք. ոմ[ա]նք ասեն, թէ էր օրէնքն [Արրահամու] և ոմ[ա]նք, թէ
էր օրէնքն Քրիստոսի, բայց մեզ հաւատի թրի Աւետար[ան]ին գոլ հնազան-
դեալ և ոչ Արրահամուն, վասն զի Արրահամունն մանսուղ էր եղեալ: Նա՛ ևս
յոյժ տեղեակ է օրինաց և վարդապետութեանն Աւետարանին Քրիստոսի, որ-
պէս և ի բազում տեղիս իսկապէս ճառէ թէ զմարգարէութենէն Քրիստոսի, թէ
սակս նշանաց և սքանչելեաց նորին, թէ գովասանութենէ վարուց նորին և թէ
յաղագս գուշակման առ յապա՛ զալլստեանն մարգարէին մերոյ, զոր թէպէտ
ազգ քրիստոնէից ի վեր ետուն բառնալ ի միջոյ իւրեանց ճշմարիտ Աւետա-
րանն սակս գուշակման մարգարէին մերոյ և ի տեղի նորին եղին զայլ իմն
Աւետարան, որպէս և ի վեր անդր ճառեցաւ: Իսկ մեր պատասխանեալ ասա-
ցաք, թէ Այդպիսի կարծիք, մանաւանդ թէ բանք և զրուցատրութիւնք, եթէ
անկիրթ ոմն ասիցէր, ո՛չ է մեզ զարմանալի այնքան, սակայն ի քումմէ խո-
հեմութենէդ յոյժ հիանալի է, մանաւանդ թէ այդպիսիք բանք և կամ կարծիք
վասն փէլղամբարութեան մարգարէին ձերոյ այնքան երևելոյ կերպիւ իմն բե-
րէ յոյժ զվնաս: Վասն զի հատուկ է մարգարէիցն ներկա տեսանել զանցեալն
և զապառնին, ուրեմն պարտ էր և մարգարէին ձերոյ իմանալ և զապառն[ին]:
Իսկ եթէ իմանայրն զինչ հարկաւորագոյն, ուրեմն քան զժողովելն ի բազմաց
ազգաց և լեզուաց զբազում Աւետարանս (եթէ ի մէջ հին Աւետարանացն գտա-
նիր այսպիսի բան վասն մարգարէութեանն իւրոյ), այսինքն՝ ի յունաց և ի
լատինացոց, հայոց և ղփտոց, մանաւանդ թէ ի յասորոց, որք նոքայ ևս վա-
րին քաղցեականաւ տառիւ և լեզուաւ, որք են զուզալեզուք և զուզատառք ընդ
զրոց և բանից Ֆրղանին ձերոյ առ ի նախապատրաստութիւն փէլղամբարու-
թեանն իւրոյ: Զի՞նչ օգուտ լինէր յայնժամն, զի աշխատիցիրն այնքան մինչ
զի ի ձեռն որոյ բռնութեան տայցէր հնազանդեցուցանել ամենայն ազգաց և
ազանց օրինաց և փէլղամբարութեանն իւրոյ: Կարէր Աստուած ի բազում տե-
ղիս տալ ծանօթանալ նմա սակս ապագայիցն եղելոց, զորոց և պատմեքն ի
զրոց ձերոց, թէ սակս կարևորաց և անկարելեաց իրաց և թէ սակս այլոց
մարմնաւորաց իրաց, թերևս ոչ հարկաւորաց եղելոց իրաց: Եւ ոչ կարաց Աս-
տուած ծանուցանել նմա և կամ հրամայել, զի ժողովեսցէ թերևս զտասն կամ
զհինգ և կամ գոնեայ զԱւետարանս երկուս ի յայլևայլ լեզուաց և պահել զնա՛
մեծաւ զգուշութեամբ ի վկայութիւնն փէլղամբարութեանն իւրոյ և ի նախա-
տինս բոլոր քրիստոնէից: Դիք ուրեմն, աղաչեմ, ի կշիռս բանականութեան և
անակնառութեան խարադի՞ կշռեսչիք. թէ կարէ լինիլ արդեօք ի մէջ երկուց
ամաց և կամ գոնեայ ի մէջ հարիւր ամաց ի մի ժողովել յամենից ազգաց և
ազանց և ի լեզու[ա]յցն այլաճաղանջից զրովանդակ գրեանս և աւետարա-

* Զնազգում ի տառը հստակ չի կարգացվում՝ նմանվում է ն-ի, բայց իմաստը պարզ է՝
արգարամիտ գտնել:

[նա]կանս և տալ ամենևին փոփոխել և կամ գոնեայ քերել և աւերել զբանս ինչ և ի տեղիս նորին դնել և կամ գծագրել այլ իմն բան և այն ևս թարց մեծի աղմկի և շփոթման և թարց դղրդման տիեզերածաւալ հաւատացելոցն Քրիստոսի: Եւ տալ այլայլել զբանս ինչ ի այնքան ազնեայցն լեզուաց, այսինքն՝ ի յունաց և ի լատինացոց, սպանիացոց և ֆրանչիզաց, շերմանացոց և ըռուսաց, շուէդացոց, դինամարգաց, հայոց և եթէօպաաացոց, վրաց և հօլանդացոց, ինկիլիզաց և ասորոց և բոլոր ազգացն քրիստոնէից, զորոց և երկարանանք ի թուելն, զոր և ոչ ոք խելագար կարէ իշխել, դնել ի գագադան և հաւատալ այսպիսոյ համբաւոյ: Զարմանալի է զհարդ ի յստիպիլն ձեր և ի բռնադատիլն ի ճշմարտութենէ դիմէք առ այդպիսիք ունայնաբանութիւնք և կարծիք, որք լիք են դատարկաբանութեամբք: Տակաւին սքանչանամք, թէ յումմէ լուաք դուք զայդ առասպելութիւն և կամ ո՞վ եբեր ի լսելիսն ձեր զայդ համբաւ նոր լուր: Իսկ թէ ասիցէք, թէ ի պատգամին մերոյ կայ գրեալ յԱստուածուստ, հետեւիլ պարտի և ի վերայ անդր առաջարկութեանն մերոյ ասելով, թէ Եթէ մարգարէին ձերոյ բացայայտեցաւ զփոփոխումն Աւետարանին և այն սակս գուշակ լինելոյ պատգամաւորութեանն իւրոյ, վասն զի ասէք, թէ մարգարէն միշտ տայր ընթեռնոյլ զ՛նորանն: Ասելի է, ուրեմն, թէ վասն է՞ր ոչ աճապարեաց նոյն մարգարէն ձեր ի ձեռն մեծի հրամանին իւրոյ և յաղթօղ իշխանութեանն առաջի իւր ածել գոնեայ զԱւետարանս երկուս և իւրաքանչիւրիքն հատկականաւ լեզուաւ թերես: Եւ առ ի հաստատութիւն իսկական Աւետարանացն այնոցիկ տալ թերես ստորագրել ներկայ եղելոց և ժամանակակից պատրիարգաց, եպիսկոպոսաց և վարդապետացն նոցունց լեզուաց, որք անպակասք գտանէին յամենայն ուրէք և յամենայն տեղիս, որպէս և արդէնիս է տեսնել, մանաւանդ թէ ոչ պակասեցան երբէք ի վարդապետացն քրիստոնէից ի սպասու մեծի ինքնակալին, որպէս և յաճախօրէն պատմի և ի գիրս պատգամացն իւրոց, որպէս և յայտ է մանաւանդապէս և ձեզ՝ նորին հետեողացդ: Կարէր ուրեմն առնել ամենայաղթն այն մեծ, եթէ լինիւր գրեցեալ այսպիսիքս և կամ կարէր լինիլ հնար այնքան ազանց լեզուացն ժողովիլ ի մի և թարց գիտութեան մուսուլմանաց և մեծի շփոթի հանել և փոփոխել զբանս ինչ, թէ սակս անուանն իւրոյ և թէ սակս այլոյ իրիք եղելոյ տալ պահել զվերոյասացեալ իսկական զԱւետարանսն ի գրատանն իւրոյ արքունի ի նշան խստասրտութեան քրիստոնէից և ի հաստատութիւն մարգարէութեանն իւրոյ: Եւ յասացելոցս հետեւին երկու կարծիք՝ կամ ասել պարտիք թէ Այլ համբաւ է սուտ և յունայնաբանութիւն, եւ կամ ասել պարտիք, թէ Մարգարէն ոչ գիտաց զիրս ապագայս և զհետեւալս զկնի իւրեան, զոր ոչ է արժան ձեզ հետեողացդ տալ պակասութիւնդ այդմիկ մարգարէին ձերոյ, վասն զի մարգարէ ասել՝ տեսանօղ թարգմանի, ուրեմն զհարդ տեսանօղ, եթէ զապագայսն ոչ տեսնալ գուշակեսցէ, մանաւանդ թէ ասէք, թէ մարգարէն ևս է գրեալ ի պատգամագրին իւրոյ, թէ Քրիստոսն գուշակեաց վասն մարգարէութեան քոյ, ուրեմն և այլն: Այլ արդ՝ զո՞րն ի յերկոցունցս ստորասէք և զո՞րն բացասէք, տուք զեզրակացութիւնն և բաւակ[ան] լիցի կողմանցս երկոցունց: Յայնժամ պատասխանեալ շէյխ անուանեալ ոմն ի նոցանէ, ասէ, թէ Զարմանամք մեք, թէ որով բանականութեամք ձերով կամիք մակացու լինիլ առաւել քան զազինս այսքան ազգաց, որք են մուսուլմանքն, որք սոքայ ամենեքեան մահմետականքս միայն և եթ ճանաչեն զոլ մի միայն Աստուած անհամեմատ և առանց ընկերի ըստ լեզուան իւրեանց ասելով վահրտ ալլահ, վլա շըրիք, դարձուցանելով զղէմս իւր առ մեզ և ծաղր առնելով զազգս քրիստոնէից, ասէր առ յիւրայինս, թէ սոքայ նսարայք առ հասարակք ասեն, թէ Քրիստոսն է Աստուծոյ որդի իբր լեզուան իւրեանց, թէ իսարա՛ միգուեանդ ք[ե] փսարի խուզա՛ ասթ, եւ իսկոյն բոլոր գումարն նոցա բարձու ձայ-

նիւ ծիծաղելի ի վերայ մեր յերկար ժամանակս և ապա դադարիլ: Եւ իբր այս
այսպէս եղև պատասխանեալ, ասացի, թէ Թէպէտ սակս իրողութեանդ յայդ-
միկ և զդիտաւորութենէ բանիդ այդորիկ պահանջէ բանն զժամանակ ինչ,
ուստի ոչ է հնար, զի համառօտ բանիք կարիցէք վեր ընդունել զօգտութիւն
ինչ ի լսելիս ձեր, իսկ եթէ կամիցի ազնուականութիւն ձեր վերստին տեղե-
կանալ զդիտաւորութենէ քրիստոնէիցս, զոր ինչ և գիտեմքն փոքր ի շատէ
յօժարութեամբ բացայալ[յ]տելոց եմ ձերին ազնուականութեանն: Վասն զի
ասացաք, թէ ամենայն կենդանիք ունին մէն միայն զաշս զգայականս, որք
թերևս նոյնօք զգայականօք աշօքն հազիւ թէ նկատեն ստորնայինս զգալիս
և շօշափելիս, հետեապէս զմարմնաւորս և ոչ զիմանալիսն, իսկ ի մէջ բոլոր
կենդանեացն միայն մարդն է, որ ունի բաց ի յգայական աշացն այլ ևս
աշս իմանալիս և բանականս՝ հոգևորս և անմարմինս, որ նովիմբ պարտի
նկատել զերկնայինս և զաստուածայինս: Վասն զի եթէ այսպէս է զորմէ
ասացաքն, ուրեմն մինչդեռ կամիցիմք տալ զենթադատութիւն զգալի իրաց
յայնժամն տամք զիրաքանչիւրքն ի ձեռն հինգ զգայականութեանցն մարմ-
նոց մերոց, այսինքն՝ զորակութիւնս գունոցն աշաց, թէ ո՞րն է սպիտակն և
ո՞րն թուին, զերգս պարուց և լալիւն սգոց՝ ականջաց, զքաղցր[ն] և դառնն՝
ի ճաշակելեաց, զանուշահոտութիւն[ն] և զժահահոտութիւնն՝ հոտոտելեաց, ըզ-
ծանրութիւն[ն] և զթեթևութիւնն, զկոշտն և զկակուղն, ջերմն և ցուրտն՝
շօշափելեաց և կամ հասարակ զգայութեանց: Բայց իբրև կամիցիք զաս-
տուածայնոցն իրաց արկանել զբուն և կամ ի գերբնականացն իրաց հասա-
նել զկայանան, յայնժամն ոչ է պարզ զգալեօք աշօք և մարմնաւորօք գոր-
ծեօք նկատել զայնպիսիսն, վասն զի անհնար է զգալուցն շօշափել և ըմբռնել
զիմանալին և կամ մարմնոյն աշացն ձկտիլ և հասանիլ անմարմնոց գոյա-
ցութեանցն: Նմանապէս և դուք յորժամ լսէքն, թէ նսարայթն, այսինքն՝
քրիստոնեայթն ասեն, թէ Քրիստոսն է որդի Աստուծոյ, յայնժամն տաք ի
ձեռն զգալի աշաց հայեցողութեան ձերոյ, իսկ որովհետև մարմնաւոր աշօ
ոչ կարէ շօշափել զաստուածային խորհուրդս, վասն որոյ և մնա՛ ի ձէնջ ան-
հասանելի և լինի տակաւին ի տեղի ծաղերց, որպէս և անցելումդ տեսաք
աշօք մերովք և բաւականացիք»:

ԲԱՌԱՑԱՆՑ

- Ահքամ — օրինադրութիւն
- Թովրաթ — Հին կտակարան
- Ինչիլ — նոր կտակարան
- Խարա միգուեանդ ք[ե] — Հիսուսի մասին ասում են,
- փսարի խուդա ասթ — Թե նա Աստծո որդին է:
- Լաթիֆ — հոգևոր
- Խարադիվ — արդարությամբ
- Ղուրբան — զոհ, մատաղ
- Ճութահայս — հավանաբար գրչական աղավաղում է,
- բայց իմաստը հասկանալի է՝ կին մեկ գիշերվա համար
- Մանսուղ էր եղեալ — հնացել էր
- Մէյմուն — կապիկ
- Մլայէք — հրեշտակներ
- Մուշառուդտուն — իմանալիներ
- Նսարայթ — քրիստոնյաներ
- Նքահիք առնուլ — պսակով ամուսնանալ
- Շարստայ լաթիվ և ոսհանին — հոգևոր, իմանալի և ցանկալի
- Ջոմանի — մարմնավոր
- Ռուհանի (նաև՝ ոսհանի) — հոգևոր, իմանալի
- Սուհանի — հաճելի, ցանկալի

Վահրտ ավաճ, Վրլա շրրիք — մեկ է Աստված, շունի ընկեր

Փէղամպարութիւն, փէլղամբարութեան — պատգամավորութիւն, պատգամարբրութիւն

Յրդան — Ղարան

Г. К. МИРЗОЯН—Первая «беседа-дискуссия» Степаноса Даштеци.— Вниманию читателей представляется первая из семи неопубликованных донныне «бесед-дискуссий» знаменитого армянского поэта, публициста и купца XVII—XVIII вв. Автор считает ее своеобразным итогом дискуссий, проведенных Даштеци в разное время и разных местах, а также важным первоисточником для изучения как философских и богословских воззрений армянского деятеля, так и идеологической атмосферы, царящей в персидской действительности его времени.